ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4585-Ա « 17 » սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի Հ.413-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 14.09.2026թ. հ.20-Ել-66077 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացիներ Լևոն և Անահիտ Միլիտոսյանների 25.06.2026թ. հ.Դ-66077-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 2-ի «Երևանի Կետրոն, Կոնդ թաղամաս հ.121/2 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Լևոն Քերոբի Միլիտոսյանի, Անահիտ Արամայիսի Միլիտոսյանի իրավունքները վերականգնելու մասին» հ.413-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

2) Որոշման նախաբանում՝ «150.0քմ» բառերը փոխարինել «172.978քմ» բառերով.

3) Որոշման 1-ին կետում՝ «37.5քմ» բառերը փոխարինել «60.478քմ» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ